

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2019-2020 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

Սիրելի՛ աշակերտ, պատմության օլիմպիադայի հանրապետական փուլում նախատեսված են նոր տիպի մի քանի առաջադրանքներ, օրինակ՝ աշխատանք ուրվագծային քարտեզի, նկարի, սկզբնաղբյուրի կամ գծապատկերի հետ, որոնք ուսումնական ծրագրի պարզօրինակ վերարտադրության փոխարեն պահանջելու են աշակերտի վերլուծական որոշ հմտություններ:

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

- Ե՞րբ է տեղի ունեցել Կոտմանի ճակատամարտը. 0,5 մ.  
ա/ 1107 թ. բ/ 1266 թ.  
գ/ 1220 թ. դ/ 1243 թ.
- Հայոց ո՞ր զորավարից է օգնություն խնդրել Վահրամ Չուբինը. 0,5 մ.  
ա/ Մուշեղ Մամիկոնյան բ/ Սմբատ Բագրատունի  
գ/ Վարդան Կրտսեր դ/ Վարազտիրոց Բագրատունի
- Որտե՞ղ է կրթություն ստացել նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին. 0,5 մ.  
ա/ Նարեկի վարդապետարանում բ/ Գանձակի համալսարանում  
գ/ Նոր Գետիկի վարդապետարանում դ/ Գլաձորի համալսարանում
- Ո՞վ է հիմնադրել Տուշայից ոչ հեռու գտնվող Հայկաբերդ քաղաքը. 0,5 մ.  
ա/ Ռուսա 1-ին բ/ Արամ նահապետ  
գ/ Սարգսի 2-րդ դ/ Երվանդ Սակավակյաց
- Նիկոլայ 2-րդի կառավարման ընթացքում ե՞րբ փակվեցին հայկական դպրոցները. 0,5 մ.  
ա/ 1884 թ. բ/ 1896 թ.  
գ/ 1905 թ. դ/ 1880 թ.
- Քանի՞ հոդվածից էր բաղկացած Շ. Շահամիրյանի՝ հայկական պետականությունը վերականգնելու նախագիծը. 0,5 մ.  
ա/ 20 բ/ 36  
գ/ 18 դ/ 61
- Ո՞ր դարում է ավարտվել Սբ Գրիգոր Լուսավորիչ զվարթնցատիպ եկեղեցու շինարարությունը. 0,5 մ.  
ա/ VII դարում բ/ XI դարում  
գ/ X դարում դ/ XIII դարում
- Ե՞րբ է բացահայտվել «Հայրենիքի սիրո գրասենյակը». 0,5 մ.  
ա/ 1869 թ. բ/ 1878 թ.  
գ/ 1875 թ. դ/ 1882 թ.
- Ե՞րբ է Թավրիզում հիմնադրվել «Խարիսխ» զինագործական արհեստանոցը: 0,5 մ.
- Ինչպե՞ս էին կոչվում հողագուրկ գյուղացիները Օսմանյան կայսրությունում: 0,5 մ.
- Ո՞վ է հաջորդել Տրդատ 2-րդին: 0,5 մ.
- Ո՞ր հասարակական-քաղաքական հոսանքի հետևորդ էր Գրիգոր Արծրունին: 0,5 մ.
- Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)  
ա/ Երևանի նահանգի հիմնումը  
բ/ Եկեղեցական կանոնադրության հրապարակումը  
գ/ Արևելյան Հայաստանում կալվածատերերի ճանաչումը հողի սեփականատեր  
դ/ Հայկական մարզի ստեղծումը

- ե/ Կովկասի կառավարչապետության ստեղծումը
- զ/ Անդրկովկասի բաժանումը հինգ նահանգի
- է/ Լազարևի կողմից Կարսի գրավումը
- ը/ Կովկասի փոխարքայության հիմնումը
- թ/ Երևանի նահանգի տրոհումը յոթ գավառի

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. «Ժամանակագրություն»
2. «Կանոնագիրք Հայոց»
3. «Տիեզերական պատմություն»
4. «Սահմանադրութիւն կանոնական»
5. «Գիրք հարցմանց»
6. «Մեծ մարդկանց մասին»

- ա. Վաչագան Բարեպաշտ
- դ. Հովհան Գ Օձնեցի

- բ. Հիպպոլիտիս
- ե. Ամֆիկրատես Աթենացի

- գ. Գրիգոր Տաթևացի
- զ. Ստեփանոս Տարոնեցի

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Արցախի մելիքությունների սահմանները տարածվում էին Գանձակի հարավային շրջաններից մինչև Արաքս գետը:
- բ/ Մելիք Շահնազարը մեծ վստահություն էր վայելում Նադիրի մոտ և մասնակցել էր վերջինիս Հնդկաստան կատարած արշավանքին:
- գ/ Նադիրի բանակում էին նշանավոր գործիչներ Դիզակի մելիք Եգանը, Գեղարքունիքի մելիք Շահնազարը, Երևանի մելիք Եսային:
- դ/ 1766 թ. Հովսեփ Էմինը վերադարձավ Հայաստան և հանգրվանեց Գանձակում՝ Գյուլիստանի մելիք Հովսեփի մոտ:
- ե/ Հովսեփ Էմինը, վերցնելով Ռուսաստանի դեսպան Վորոնցովին ուղղված հանձնարարական նամակը, 1761 թ. ճանապարհվում է Սանկտ Պետերբուրգ:
- զ/ 18-րդ դարի երկրորդ կեսի ռուս-թուրքական առաջին պատերազմը Ղրիմի կամ Արևելյան պատերազմն է:
- է/ 1885 թ. Կովկասում, Նոր Նախիջևանում և Բեսարաբիայում փակվեցին հայկական 300 դպրոցներ:
- ը/ Կ. Պոլսի ռուսանողական խորհրդի անդամներ Նահապետ Ռուսինյանը, Երվանդ Օտյանը, Սերոբվե Վիչենյանը (Սերվիչեն), Նիկողայոս Պալյանը և ուրիշներ մշակում են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն:
- թ/ 19-րդ դարի սկզբում Կիլիկիայում համայնքային ներքին ինքնավարությամբ աչքի էին ընկնում Զեյթունի (Ուլնիա) 30 հայկական գյուղեր՝ մոտ 28 հազար հայ բնակչությամբ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ Հայոց եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, եղեկեցու ու պետության փոխհարաբերությունները սահմանող կանոնադրությունը կոչվել է կոնդակ:
- բ/ 1863 թ. Ազգային սահմանադրության համաձայն՝ արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններից Ազգային ժողովը կոչվել է նաև Ազգային կենտրոնական վարչություն:

գ/ Թուրքական հակակառավարական ջոկատները կոչվում էին չեյլոներ:

դ/ 19-րդ դարի սկզբին Էրզրումի կառավարիչ փաշան՝ վալին, համատեղում էր կայսրության արևելյան մարզերի զորքերի հրամանատարի՝ սերասկյարի պաշտոնը:

ե/ Երևանի խանության ռազմավարչական մեծ իշխանությամբ օժտված կառավարիչը կոչվում էր բեկլարբեկ:

զ/ Մարքսիստական հենքի վրա ծնունդ առած գաղափարախոսությունը կոչվում է սոցիալ-դեմոկրատիա:

է/ Հայդուկ արաբերեն նշանակում է ինքնագոհ:

ը/ Հայոց տունը, ըստ «Որոգայթ փառացի», հայոց ապագա պետության բարձրագույն գործադիր մարմինն էր:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Արշամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը:

բ/ Աքեմենյանները կառուցել էին Հին աշխարհի մեծագույն մայրուղիներից մեկը՝ 2400 կմ երկարությամբ «Արքայական ճանապարհը», որը ձգվում էր պարսից տերության մայրաքաղաքից մինչև Էգեյան ծով:

գ/ Ք. հ. 1-2-րդ դդ. ապրած հույն պատմիչ Պլուտարքոսը հավաստիացնում է, թե Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:

դ/ Տիգրան Մեծի տերությունը տարածվում էր Եգիպտոսից և Կարմիր ծովի ափերից մինչև Կովկասյան Մեծ լեռները, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով:

ե/ Հյուսիսից Կորբուլոնին դաշնակցում էր վրաց Փարսման թագավորը, որը հռոմեացիներին իր հավատարմությունը ցույց տալու համար սպանել էր իր որդուն՝ Հռադամիզդին:

զ/ Սեպտիմիոս Սևերոսի որդին՝ Կարակալլան, կայսր դառնալով, երազում էր նվաճել Հյուսիսային Կովկասը:

է/ Տեղեկանալով Գրիգորի՝ Տարնուն լինելու մասին՝ Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին, Խոսրովի դուխտը և հայոց զորքը գնում են նրան ընդառաջ, հասնում են Բագառիճ՝ Նպատ լեռան ստորոտ:

ը/ Նանե դիցուհու պաշտամունքի գլխավոր կենտրոնը Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանն էր:

թ/ Մարաստանի Միհրդատ թագավորը հավատարմության երդում տվեց Տիգրան 2-րդին և փոխարենը հետ ստացավ ոչ միայն գահը, այլև ամուսնացավ Տիգրան 2-րդի դստեր հետ:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

*Անտիոքի և Կիլիկիայի միջև բարեկամություն հաստատելու համար կողմերը որոշեցին Բոհեմունդի ավագ որդի և Ժառանգորդ Ֆիլիպին ամուսնացնել Լևոնի եղբայր Ռուբենի ավագ դուստր Ալիսի հետ:*

Ուղղում. ոչ թե՛ \_\_\_\_\_ (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝ \_\_\_\_\_ (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

*Արտաշատ քաղաքում հայոց մեծամեծերի հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ նրա գլխին դրվեց թագավորական զարդանշանը: Մնացածները, հարգանք մաքուր ցելով թագավորին, ողջունում էին՝ ... անվանելով:*

ա. Ո՞ր արքայի մասին է խոսքը:

բ. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

գ. Ո՞ր դարում է տեղի ունեցել նշված իրադարձությունը:

**բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)**

1. Ե՞րբ է հաստատվել «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը». 0,5 մ.  
 ա/ 1871 թ. հունվարի 18-ին բ/ 1789 թ. օգոստոսի 26-ին  
 գ/ 1870 թ. սեպտեմբերի 4-ին դ/ 1776 թ. հուլիսի 4-ին
2. Ո՞վ է հին հունական ողբերգության հիմնադիրը. 0,5 մ.  
 ա/ Էսքիլես բ/ Արիստոֆանես  
 գ/ Սոֆոկլես դ/ Էվրիպիդես
3. Ե՞րբ Գերմանիայում վերացվել նախագահի պաշտոնը. 0,5 մ.  
 ա/ 1933 թ. բ/ 1939 թ.  
 գ/ 1934 թ. դ/ 1938 թ.
4. Ո՞ւմ սկսած ապստամբության արդյունքում 1920 թ. Ատրպատականը «Ազադիստան» («Իրանական Ադրբեջան») անվանումով հայտարարվեց Իրանից անկախ տարածք. 0,5 մ.  
 ա/ Մոհամմադ Խիաբանի բ/ Իշխան Կոնոե  
 գ/ Ռեզա խան դ/ Ֆեյսալ
5. Անգլիացի ո՞ր տնտեսագետն է բացահայտել Մեծ ճգնաժամի խորքային պատճառները: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)  
 1. բարոկկո  
 2. իմպրեսիոնիզմ  
 3. կլասիցիզմ  
 4. դեկադենտություն

ա. արտասովոր բ. օրինակելի գ. տպավորություն դ. անկում

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)  
 ա/ 919 թ. Եվրոպայում առաջացավ Սրբազան հռոմեական կայսրությունը:  
 բ/ 756 թ. Միջին Իտալիան նվիրվեց Հռոմի աթոռին, որով առաջացավ պապի աշխարհիկ պետությունը:  
 գ/ 1055 թ. թյուրք-սելջուկները գրավեցին Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը:  
 դ/ 1532 թ. իսպանացի կոնկիստադոր Պիսարոն 130 հոգուց բաղկացած ջոկատով ափ իջավ ինկերի պետության հյուսիսում:  
 ե/ Գերմանիայում բարձրագույն օրենսդիր ատյանները երկուսն էին՝ Ռայխստագը և Միութենական պալատը:  
 զ/ Մեծ Բրիտանիան 1920-1930-ական թթ. վարում էր «փայլուն մեկուսացման» քաղաքականություն:  
 է/ Բալկանյան առաջին պատերազմը անարդարացի պատերազմ էր:  
 ը/ Հնդկական ազգային կոնգրեսում ձախ ազգայնական ուղղության առաջնորդը Մահաթմա Գանդին էր:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի  
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,  
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2020 թ.